Կարգապահական գործ թիվ ԿԳ-15057

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 209-րդ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/127-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՍԱՄՎԵԼ ԹԱՄԱԶՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Լիպարիտ Սիմոնյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Տիգրան Խուրշուդյանի, Ալեքսանդր Սիրունյանի, Կարեն Մեժլումյանի,

Քարտուղարությամբ Նոննա Համբարձումյանի

Քննության առնելով փաստաբան Սամվել Թամազյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 01.06.2015թ-ին Պալատի Նախագահին է ներկայացրել է տեղեկանք, այն մասին, որ փաստաբան Սամվել Թամազյանը (արտոնագիր թիվ 815) 2014թ. սեպտեմբերից մինչև 2015թ ապրիլ (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով ունի 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամ գումարի պարտավորություն:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի առաջին տեղակալի 01.06.2015թ. թիվ 142-Ա/ԿԳ-15057 որոշմամբ փաստաբան Սամվել Թամազյանի (արտոնագիր թիվ 815) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնագրքի 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

02.06.2015թ. կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2015 թվականի սեպտեմբերի 28-ին ժամը 20:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ 12 սենյակ):

3. **<u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>**

Խորհրդի նիստի օրվա և ժամի մասին փաստային և էլեկտրոնային հասցեներով ծանուցվել է փաստաբանՍամվել Թամազյանին, սակայն վերջինս չի ներկայացել և բացատրություն չի տվել:

4. **<u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>**

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) Փաստաբան Սամվել Թամազյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 18.04.1991թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.09.2015թ. տրամադրված տեղեկանքով),
2) Փաստաբան Սամվել Թամազյանը ունի 40.000 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն 2014թ. սեպտեմբերից մինչև 2015թ ապրիլ (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 01.06.2015թ. Պալատի նախագահին տրամադրված տեղեկանքով),
3) Փաստաբան Սամվել Թամազյանը 2014թ. սեպտեմբերից մինչև 2015թ ապրիլ (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամ գումարի պարտքն ամբողջությամբ վճարել է (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 25.09.2015թ. տրամադրված տեղեկանքով):

5. **<u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն փաստաբան Սամվել Թամազյանի (արտոնագիր թիվ 815 ստացած18.04.1991թ.) նկատմամբ 2006-2015թթ. ընկած ժամանակահատվածում 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ անդամավճարի պարտք ունենալու մասով:

Պալատի խորհրդի 01.06.2011թ. թիվ 11/7 որոշմամբ Սամվել Թամազյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողություն, որը մարվել է:

6. **<u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Սամվել Թամազայանի նկատմամբ կարգապահական գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Պալատի խորհրդի 20.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարներիի վճարումների վերաբերյալ Կարգի (Նոր

խմբագրությամբ)» 17-րդ կետի՝ «Առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի կողմից իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը, անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում, կարգապահական վարույթն ենթակա է կարճման: Երկրորդ կամ հետագա ցանկացած անդամավճարը չվճարելու խախտման դեպքում՝ անկախ կարգապահական վարույթն հարուցելուց հետո պարտքի մարման հանգամանքից, կարգապահական վարույթն այդ հիմքով չի կարող կարճվել»:

ՀՀ Փաստաբանների Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.09.2015թ-ի տեղեկանքից և դրան կից հավելվածից հետևում է, որ փաստաբան Սամվել Թամազյանի (արտոնագիր թիվ 815) նկատմամբ նախկինում չի կիրառվել Պալատի խորհրդի 20.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարներիի վճարումների վերաբերյալ Կարգի (Նոր խմբագրությամբ)» 17-րդ կետը:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.7-րդ և 39.9-րդ հոդվածներով, Պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան՝ Սամվել Թամազյանի (արտոնագիր թիվ 815), նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ Պալատի խորհրդի 20.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարներիի վճարումների վերաբերյալ Կարգի (Նոր խմբագրությամբ)» 17-րդ կետի՝ հիմքով:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին հանձնարարել՝ սույն որոշման մասին իրազեկելու փաստաբան Սամվել Թամազյանին:

<u>Ծանոթություն՝</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ որոշումն ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի
Խորհրդի նիստը նախագահող՝ **Լիպարիտ Սիմոնյան**